ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՎԱՀԵ ԱՆԴՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ գործառույթները՝

1. Իրականացրել եմ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

2. իրականացրել եմ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,

3. իրականացրել եմ գործատուներին, աշխատողներին և նրանց ներկայացուցիչներին աշխատանքային հարաբերություններին առնչվող օրենսդրությանը համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն,

4. իրականացրել եմ աշխատանքի անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահաջների խախտման դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառելու նպատակով անհրաժեշտ նյութերի նախապատրաստման աշխատանքներ,

5. իրականացրել եմ աշխատանքի անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ բացատրական աշխատանքներ,

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
HEALTH AND LABOR INSPECTION BODY OF THE REPUBLIC OF ARMENIA

22, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրի 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

6. իրականացրել եմ տնտեսվարող սուբյեկտներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացման աշխատանքներ,

7. իրականացրել եմ ամիջական ղեկավարի հանձնարարությամբ գրությունների և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

8.Պետական եկամուտների կողմից ստացված գրության հիման վրա ուսումնասիրել եմ ներկայացված տեղեկատվությունը և դրա կից նյութերը,պարզել եմ դրանցում արտացոլված փաստական հանգամանքները և իրականացրել եմ անհրաժեշտ ընթացակարգային գործողություններ,այդ թվում՝ կազմել եմ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության ծանուցագիր, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, գործի քննության ծանուցագիր և վարչական տույժ նշանակելու մասին որոշում:

9.մասնակցել եմ դիմում-բողոքի հիման վրա իրականացված գործի կազմման և վարման գործընթացին՝ ներգրավված լինելով գործի շրջանակներում անհրաժեշտ փաստական հանգամանքների ուսումնասիրությանը և համապատասխան ընթացակարգային գործողությունների իրականացման աշխատանքներին:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

Ալմաստ Հարությունյան

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները գնահատում եմ՝

ՎԱՀԵ ԱՆԴՐՅԱՆ

ՀՀ, 0046, ք. Երևան, Շենգավիթ, Արաբկիրի 26
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107